

աւելի համաձայն է նախնեացին, և թէ Արեմոնայ Հայոց գրազէտ դասն է միայն, որ շնորհիւ նորահար տառափոխութեան՝ փոխած է նոյնպէս հայկական տառերու նախկին արտասանութիւնքը:

Ռուսահայոց ինչպէս նոր գրականութեան՝ այսպէս ևս նախնեաց յարմարագրութեան վերահաստատութեան իբրև ուղղիչք և զարգացուցիչք եղան վերոյիշեալ երեք հեղինակներս և նոցա գպրոցները. սակայն ինչ կը թուի, թէ սոքա ևս 'ի Գերմանացւոց անտի ներշնչուած ձեռք զարկին այսպիսի մի բարեկարգութեան, առ որս ուսան և զգիտութիւնս: Թէպէտև 'ի Տփղիս հրատարակուող «Մշակ» և «Հայկական Աշխարհ» թերթերու մէջ, որոնց առաջին տարիներու մի քանի թիւերն միայն աչքէ անցուցի, տակաւին կը լինէին անձիշտ տառադարձութիւնք 'ի բազում տեղիս, բայց որովհետև ժողովրդեան անգրագէտ մասի արտասանութեան համաձայն էր այն հինաւուրց յարմարագրութիւնն՝ այն պատճառաւ իսկ առանց մեծի դժուարութեան ընդհանուր եղաւ: Միայն թէ կան այժմ դարձեալ միջանի յատուկ անուններ՝ զորս Ռուսահայոց լրագրէք կը շարունակեն հակառակ իրենց պահանջած սկզբանցը տառադարձել. օրինակի աղագաւ Paris «Փարիզ» և նախնեաց Տփղիսը՝ Ռիֆլիզ, ևայլն: Ժողովրդական լինելէ դուրս՝ չեմ կարծեր որ ուրիշ բանաւոր պատճառներ ևս լինին այսպիսի մի թիւր կերպութեան. իսկ ժողովրդականութիւնն եթէ իրք բաւական պատճառ մի է, ինչո՞ւ համար չպիտի զօրէ նոյնպէս միւս անուանց համար ևս, որոց ուղղագրութեան, ընդ հակառակն, այնքան վրէժխնդիր են Ռուսահայք:

Շարունակելի

Հ. Բ. ԱՐԳԻՍԵՅԱՆ

ԱՆՅԱՅՏ ԿԱՄ ԱՆՎԱԻՆԵՐ ԳԻՐԳ

Ի ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Աստուածաշունչ գրող մէջ բայց առանց անոնց մասն սեպուելու՝ կը գտնուին նաև բողոքովին անհարազատ գրութիւնք, որք երբեմն իբրու անոնց մասունք՝ շատ զրչագրաց մէջ ալ անցած են: Այսպիսի թէ հին և թէ նոր կտակարանի պատկանող երկասիրութիւնք բազմաթիւ են առ այլս 'ի բրիտանոնեայ հին ազգաց, բայց նաև առ մեզ ոչ աննշան թուով ու իրաւամբ հետադրեանակոյն: Ընդհանուր և առհասարակ ընդունելի կարծիք մ'է՝ թէ ասոնցմէ շատին յօրինողք և յերկրողք՝ քրիստոնէական կրօնքն ընդունող Հրեայք եղած ըլլան՝ հին կտակարանին մասն ենթադրուածներն, հասարակաց թուականութեան առաջին դարերէն. նորոյն ալ՝ Վնոստիկեան աղանդաւորք՝ ունինալով իրենց մասնաւոր գիտումն ու նպատակը թէ առաջինքն և թէ վերջինք: Բայց մեր վախճանէն զուրս ըլլալով ասոնցմով զրադիւն ու զբաղեցընելը, բաւական սեպելք համառօտիւ յիշատակել՝ ինչ որ այս նկատմամբ աւանդած ու հասուցած է առ մեզ հայ գրականութիւնն:

Ասոնց մէջ առաջին է կարգաւ և ժամանակաւ, — որովհետև յաճախ զրչագրէր անմիջապէս Ծննդոց գրքէն վերջը կը կարգին զայն, — կտակք երկոտասան նահապետաց կոչուածը: Հաւանական կ'երևնայ թէ

քրիստոնէութեան առաջին դարուն՝ կամ 'ի սկիզբն երկրորդին շարա-
գրուած ըլլան նոյն սուրբ կրօնքն ընդունող հրէի մը ձեռքով՝ որ Յակոբայ
որդւոց բերանը կը գնէ՝ Մկսիայի վերաբերեալ մարգարէութիւններն
կտակը կոչուելուն պատճառն է՝ որ իւրաքանչիւր զք յորդոց աստուածա-
տեան խորայնի՛ր մահուան անկողնոյն շուրջը բոլորուած որդւոցը իմաստուն
խրատներ, և ընտիր պատուէրներ կ'առանգէ յայտնելով իրենց զթաքուն
գիտութիւն ապագայից։

Քրիստոսի աստուածութեան վրայ ամենընտիր վիսյութիւնք ամբողջուած
են 'ի նոսա, կարեւորք իրենց հնութեամբ. ընդուն ալ քերթողական բացա-
տրութեամբք ճոխ, և հեղինակն՝ հմուտ 'ի գիտութեան գրոց սրբոց,
անոնց հոգին լաւ ըմբռնած է և կը բացատրէ. երէց է ժամանակաւ քան
գՌոսգինէս, որ 'ի գիրս իւր այլեայլ տեղուանք անոնց յիշատակութիւնը
կ'ընէ, թէպէտ և ոչ գտանելով 'ի շարս կանոնական գրոց. և որովհետեւ
Երուսաղեմի կործանման յիշատակութիւնն կ'ըլլայ անոնց մէջ և հրէական
ժողովրդեան պատուհասին, անտարակուսելի կ'ըլլայ որ Քրիստոսի 80 թուա-
կանէն ետքը գրուած են։ Վերմանացին Մէօհլէր իր Գիտութիւն շարց
(Patrologie) գրքին մէջ կ'ըսէ թէ ամենայն ինչ 'ի նմա յայտնադնէս կը ցուցը-
նէ թէ քրիստոնէի մը հեղինակութիւն է, և անընդունելի կը համարուի Կրա-
սի ենթագրութիւնը թէ յառաջ քան զՔրիստոս հրէի մը ձեռքով շարա-
գրուած ըլլան, և ապա 'ի քրիստոնէից այլեայլ փոփոխութիւններ կրած. վասն
զի ոճոյն միակերպութենէն յայտնի կը գտնուի, կ'ըսէ, մէկ անձի մը եր-
կասիրութիւն ըլլալը։ Հաւանական կը սեպէ դարձեալ որ հրէայ մը ըլլայ
յօրինողն և ոչ հիթանոս. և զոր կը հաւատարմացնէ գործածած յոյն լեզուի
ոճովն և 'ի հրէական այլեայլ առանգութեանց՝ զոր կը քաղէ Ենովքայ անու-
նը կրող մարգարէական գրքէն։ Մեր գրականութիւնն հասուցած է առ մեզ
ասոնց հաւատարմի՛ւ. ընտիր ոճով պատրաստուած թարգմանութիւն մը։
Կը զեննք հետաքննի բունասիրաց համար ասոնց գլխակարգութիւնքը։
Ամենուն ալ սկզբնաւորութիւնը գրեթէ նոյն է։

Գիրք Մնացորդաց. խօսք Ռաբինի, կտակ առաջնոյն. « Հրաման կտակի
Ռուբենի զոր պատուիրեաց որդւոց իւրոց, զկնի երկրորդ ամի վախճանելոյն
Յովսէփայ »¹։

Կտակ Շմաոնի, վասն նախանձու, երկրորդ։

Կտակ Ղևնայ, վասն քահանայութեան և ամբարտաւանութեան։

Կտակ Յուդայի, վասն արութեան և արծաթսիրութեան։

Կտակ Իսաքարայ։

Կտակ Զաբուղոնի։

Կտակ Դանայ, վասն ամբարտաւանութեան։

Կտակ Նիփթալիմայ, վասն բնական բարութեան։

Կտակ Գադայ, վասն տեսութեանն։

1. Գրքադէր մը կը յաւելու.

... « Մի ոք թուեսցի շաղկապի սոս բառք
կամ Էքիթթ զբրոց անցառք.
Աստուածայուն է այս դարմանք,
Հոգոց մըտաց կենդանականք։
Զի հանապարհ է սոց վերին
Հիմն և առաջնորդ օրինին
Վրկայք պատմիչք անեղ Բանին
Մարգեղութեանըն կուսածին »...

Կտակ Ասերայ, վասն երկգիմութեան և առաքինութեան,
Կտակ Յովսեփայ, վասն նախանձու:
Կտակ Բենիամենի, երկոտասաներորդ:

* *

Ասոնցմէ ետքը կու գայ Պատմութիւն Յովսեփայ և Ասաներայ, Ասանէթ՝ որպէս յայտնի է 'ի սուրբ Գրոց, դուստր էր Պուգիփարայ Եգիպտացոյ, զոր տուաւ Փարաւոն 'ի Հարսնութիւն Յովսեփայ: Այս գրուածին լատին համառօտութիւնն հրատարակեալ է 'ի Պատմական հայեի կոչեցեալ գիրս Վինկենտի Բելլովիգենացոյ և առ Փաբրիկիոսի, յիւրում Մատենադարանի: Նոյն Փաբրիկիոս հրատարակած է 'ի Codex pseudoeptigraphus Ասանէթայ պատմութեան սկզբնաւորութիւնն 'ի յոյն լեզու, որ առ մեզ հայկական լեզուով պահուած ամբողջ գրութեան գրեթէ քառորդ մասն է. բայց շատ աւելի ընդարձակ ոճով քան զլատինականն հրատարակեալ 'ի Բելլովիգենացոյն: Յունական սկզբնագրին շարունակութիւնն կամ ամբողջութիւնը ինչուան հիմա գտնուած չէ, և անանկով Ասանէթայ պատմութիւնն անկատար մնացած, թէպէտեւ հնագոյն և աւելի հարազատագոյն կերպարանքով մը: Հայ թարգմանութիւնն, որ հաւանականաբար յունականին վրայ եղած է, ամբողջ գրուածքն հասուցած է մինչև առ մեզ, բայց 'ի մէկ կտորէն՝ որ կամ դիտմամբ զեղչուած է, և կամ ձեռագրին կրած մէկ արկածից հետեւանք է: Թարգմանութիւնն է հարազատ և ճիշդ ընդ ընդգրկին և ընտիր լեզուով, և շատ տեղ կրնայ ուղղագրել մնացած յոյն հատուածը: Կը գտնուին 'ի նմա քանի մը զանոյառութիւնք, բայց ոչ այնչափ էականք և կարեւորք: և անշուշտ արգասիք գրչաց կամ ընդօրինակողաց անմտադրութեանն: Լեզուին նայելով, հին թարգմանութիւն կ'երևնայ, սակայն հաւանականաբար առանց պատկանելու մեր մատենագրութեան ամենէն աւելի ծաղկած և բարգաւաճ ոսկեդարուն:

Հին կտակարանի անհարազատ գրոցքննադատութեամբն ու հետազօտութեամբ զբաղող անուանին Տիմոն՝ 1885էն 'ի վեր յայտնած էր որ այս պատմութեան ասորական մէկ օրինակը կը գտնուի 'ի Բրիտանական մուսէնին. մտադրութիւն ընելով անշուշտ թէ արդէն այդ թուականէն շատ յառաջ 1870ին, հրատարակած էր զայն տպագրութեամբ Լանտ, գտնելով ուրիշ հետաքննական գրուածոց հետ «Չաքարիայի Միլիտինկոյ» պատմութիւն եկեղեցւոյ» կոչուած գրքի մը մէջ: Յերկու ձեռագիրս գտնուած հատուածներն իրարու քով դնելով և միացընելով, կրցաւ Լանտ գրեթէ ամբողջութիւն տալ գրութեան. բայց 'ի մէկ պարագայ մնացած կտորէ՝ երկու կամ չորս էջ: Ստորի թարգմանութիւնն եղած է 'ի վեցերորդ դարու. սակայն շատ աւելի համառօտ քան զհայկականն. կամ այն պատճառաւ որ հայ թարգմանչին ունեցած օրինակը ամբողջ էր, և կամ ասորին համառօտած է զայն, որպիսի սովորութիւն և զատուութիւն յաճախ կը տեսնուի այդ ազգին թարգմանչաց քով: Սակայն անով հանդերձ շատ տեղ կ'ուղղէ զհայկականն, որն որ իր կողմանէ ասորի թարգմանութեան բազմապատիկ սխալ ընթերցուածներն կը լուսաբանէ:

Հայկական թարգմանութիւնն ամբողջ հրատարակուած է 'ի մեր տպարանի. նորագոյն հրատարակութիւն մ'ալ միոյ եւեթ մասին, չորրորդ և

վերջին գլխոյն, հանդերձ գաղղիական թարգմանութեամբ եղած է 'ի ձեռն Գարրիէր ըմբատարի, ուսուցչի հայ լեզուի 'ի Փարիզ, հանդերձ հմուտ յառաջաքանով և տեղեկութեամբ՝ յորմէ վերը գրուած քանի մը տեղեկութիւններն քաղեցինք¹ :

* *

Որիչ են այս գրուածէն Աղօրք Յովսէփայ և Աղօրք Ասանքայ կոչուածներն, և որք կը գտնուին յասորի, 'ի յոյն և յայլ լեզուս. իսկ մեր հայ մատենագրութեան մէջ գեռ յայտնուած չեն: Միայն անոնց յիշատակութիւնը կայ առ Միւրթարայ Այրիվանեցոյ պատմչի, որ Գիրք Հրէից ծածուկքն կոչուած անվաւեր գրուածոց մէջ կը յիշէ իսց յայլոց նաև Աղօրք Յովսէփայ անունը կրող գրուած մը. — 'Նոյն պատմիչն՝ Սարկաւազ վարդապետին ձեռքով եղած սուրբ Գրոց ցուցակին կարգաւորութիւնն յիշատակած ատեն՝ ուրիշ անհարազատ գրութեանց հետ կը յիշէ նաև Ասենիի աղօթքն:

Մանասէի աղօրք. որ ոչ լուկ սուրբ Գրոց յաւելուածոց մէջ, այլ և 'ի հասարակաց աղօթք և 'ի ժամագիրս մեր մուտ գտած է. և է հանրածանօթ Տէր ամենակալ սրտառուչ մողթանքն: Սուրբ Գրոց կանոնէն դուրս ձգուելուն պատճառն ուրիշ բան չէ, բայց տարակուսական ըլլալն թէ արդեօք ստոյգ Մանասէ արքայի շարագրածն է թէ յայլոց գրուած և իրեն ընծայուած: Ապա թէ ոչ, համաձայն աստուածաշունչ գրոց պատմութեան, որ այս յանցաւոր թագաւորին մեղքն պատմելէն ետքը, կը յիշէ ու կը գովէ աղօթիք առ Աստուած դառնալն ու ուղարկարութիւնը, եթէ ոչ զայս՝ ասոր նման ուրիշ ընտիր և աստուածահաճոյ գղջման և հառաչանաց ձայն մը բարձրացուցած պիտի ըլլար 'ի քաւել զմեզսն: Հաւանականաբար յերրայեցի լեզուէ թարգմանուած է 'ի յոյն և 'ի լատին. իսկ 'ի մերս 'ի յունէ, 'Ոմանք՝ հերրայեցի լեզուով գտնուած կամ յիշատակուած չըլլալուն՝ գոյնն սկզբնագիր կը համարին, իսկ այլք զլատինն. և գրութեան ժամանակը բրիտանական թեան երրորդ դարուն կը պատշաճեցընեն, նոյն ատեններն քրիմարցուած Ասաքիական Սահմանադրութիւնք կոչուած գրութիւն մէջ հանդիպելով անոր յիշատակութեան:

Մահ երկրաւասան մարգարէից, որ կը տեսնուին ոչ միայն յաստուածաշունչ գիրս մեր, այլ նաև 'ի ճաշոցս՝ իրենց տօնին սեպհական օրը իբրու պատարագի ընթերցուած նշանակուած և ընդունուած: Բայ յերկրաւասան փոքր մարգարէից, կը հանդիպինք նաև մահուան Եսայեայ, Երեմիայ, Էզեկիէլի և Դանիէլի մարգարէից: Այլ առաջիններուն և ոչ ասոնց յիշատակութիւնը կայ ուրիշ ազգաց քով գտնուած ու անհարազատ սեպուած գրութեանց մէջ. որով և հաւանական կ'երևնայ ենթադրել թէ 'ի մերոյ յօրինուած ըլլան: Ժառնքնոր մը մէջ նշանակուած կը գտնենք յանուն սրբոյն Եպիփանու. և Սուրբ անք երկրաւասան մարգարէիցն թէ ուստի էին, և որպէս վախճանեցան և կամ՝ ուր թաղեցան, Եպիփանու եպիսկոպոսի ասացեալս:



¹ Une version arménienne de l'Histoire d'Asseneth, par A. Carrière, professeur à l'Ecole des langues orientales vivantes. Paris.